ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/16

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.02.2017թ. թիվ 03/26-3/2178-18 գրությամբ «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Մեղրիի համայնքապետարանի 27.12.2017թ. թիվ 1729 գրության հիման վրա, 09.02.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>Մեղրիի համայնքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Մեղրիի համայնքապետարանը 27.12.2017թ. թիվ 1729 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացվում է, որ 01.02.2017թ. Մեղրիի համայնքապետարանի կողմից կազմակերպված ՍՄ-ՄՀ-ՊԸԱՇՁԲ-17/4 ծածկագրով ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղում մ/մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի արդյունքում, 11.03.2017թ. «Կոմերցիալ պարտներս» ՍՊԸ-ի հետ կնքվել է կապալային աշխատանքների կատարման ՍՍՄ-ՄՀ-ՊԸԱՇՁԲ-17/04 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Համաձայն 18.05.2017 թվականին կողմերի միջև կնքված Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Համաձայնագրի՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է 2017 թվականի հուլիսի 30-ը: Նշված վերջնաժամկետի ավարտին կապալառուի կողմից կատարված է եղել նախահաշվով նախատեսված աշխատանքների 11,12 տոկոսը:

Կապալառուն խախտել է Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը), որը կողմերի միջև կնքված Համաձայնագրով սահմանվել էր 2017 թվականի հուլիսի 30-ը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Մեղրիի համայնքապետարանը 03.08.2017թ. N 980 գրությամբ միակողմանի հրաժարվել է Կապալառուի հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:»:

Մեղրիի համայնքապետարանը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն քաղաքապետարանի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ն Խորհրդին 28.02.2018թ. ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Մեղրիի համայնքապետարանի կողմից 01.02.2017թ. կազմակերպված ՍՄ-ՄՀ-ՊԸԱՇՁԲ-17/4 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղում մ/մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգի արդյունքում, 11.03.2017թ. «Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ի հետ կնքվել է կապալային աշխատանքների կատարման թիվ ՍՄ-ՄՀ-ՊԸԱՇՁԲ-17/04 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ նաև՝ պայմանագիր):

Պայմանագրի 1-ին կետի.

- 1.1 ենթակետի համաձայն՝ կապալառուն պարտավոր է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված՝ «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղում մանկապարտեզի կառուցման» աշխատանքները:

- 1.3 ենթակետի համաձայն՝ նույն պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 2017թ. մայիսի 31-ը:

Մեղրիի համայնքապետարանը 28.03.2017թ. գրությամբ «Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ին հայտնել է, որ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համաձայն ընկերությանը նախագիծ կտրամադրվի հողի նպատակային նշանակության փոփոխության պետական գրանցում ստանալուց հետո:

Կողմերի միջև՝ Մեղրիի համայնքապետարանի առաջարկով, 18.05.2017թ. կնքվել է պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման թիվ ՍՄ-ՄՀ-ՊԸԱՇՁԲ-17/04 պայմանագրի մասով լրացուցիչ համաձայնագիր (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

ՀՀ կառավարության կողմից հողի նպատակային նշանակությունը փոփոխելու դրական եզրակացությունը ուշանալու հետևանքով, Վարդանիձոր գյուղի մ/մանկապարտեզի

շինարարական աշխատանքները հետաձգվել են և պետք է վերսկսվեին 2017թ. մայիսի 18-ին:

Համաձայնագրի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները կապալառուն պարտավոր էր ավարտել 60 օրվա ընթացքում:

Վարդանիձոր գյուղի մ/մանկապարտեզի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2017 հուլիսի 30-ին:

Մեղրիի համայնքապետարանի 03.08.2017թ. թիվ 980 գրության համաձայն՝ համայնքապետարանը միակողմանի հրաժարվել է «Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (2017 թվականի ապրիլի 25-ի ՀՕ-21-Ն օրենք) 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոհիշյալ իրավական և փաստական հանգամանքներից, գտնում ենք, որը «Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, այն է՝ չի կատարել «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղում մ/մանկապարտեզի կառուցման» շինարարական աշխատանքները, ինչի հիման վրա Մեղրիի համայնքապետարանը 03.08.2017թ. թիվ 980 գրությամբ պայմանագրից միակողմանի հրաժարվել է, իսկ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն մասնակիցը ընդգրկվում է

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության կողմից լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/16 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 09.02.2017թ. թիվ 03/26-3/2178-18 գրությունը, Մեղրիի համայնքապետարան 27.12.2017թ. թիվ 1729 գրությունը, Մեղրիի համայնքապետարանի և «Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ի միջև 11.03.2017թ. կնքված N ՍՄ-ՄՀ-ՊԸԱՇՁԲ-17/04 ծածկագրով գնման պայմանագիրը, Պատվիրատուի կողմից 03.08.2017թ. «Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ին ուղղված թիվ 980 գրությունը, Ընկերության կողմից ներկայացված գրավոր դիրքորոշումը.

Մեղրիի համայնքապետարանի և «Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ի միջև 11.03.2017թ. կնքվել է N ՍՄ-ՄՀ-ՊԸԱՇՁԲ-17/04 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղում մ/մանկապարտեզի կառուցման» աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:
- 1.2 կետի համաձայն՝ նույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական

նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

- 1.3 կետի համաձայն՝ նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ «31.05.2017թ.»:
- 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառած վնասները, եթե.

- ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

- բ) Կապալառուն խախտել է նույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

- 3.2.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է նույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:
- 8.2 կետի համաձայն՝ նույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի նույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
- 8.7 կետի համաձայն՝ Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև նույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում նույն կետով նախատեսված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

Պայմանագրի N 2 Հավելվածով նախատեսված աշխատանքների կատարման օրացույցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքներն սկսվում են Պայմանագրի կնքման պահից և ավարտվում են 31.05.2017թ.:

Պայմանագրի շրջանակներում 18.05.2017թ. կնքված համաձայնագրով սահմանվել է հետևյալը.

«Գնումների գործընթացի ավարտից հետո կնքված պայմանագրի «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղում մ/մանկապարտեզի կառուցման»

աշխատանքների կատարման համաձայն շենքի շինարարական աշխատանքները Կապալառուն պարտավոր է ավարտի 60 օրվա ժամկետում:

ՀՀ կառավարության կողմից հողի նպատակային նշանակությունը փոփոխելու դրական եզրակացությունը ուշանալու հետևանքով Վարդիձորի գյուղի մ/մանկապարտեզի շինարարական աշխատանքները հետաձգվեցին և սկսվել են 2017թ. մայիսի 18-ին: Վարդիձորի մ/մանկապարտեզի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2017թ. հուլիսի 30-ին: Չավարտելու դեպքում պատասխանատվությունը կրում է Կապալառուն:

Համաձայն կնքված Պայմանագրի 8.9 կետի՝ Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի ասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:»:

Պատվիրատուն 03.08.2017թ. թիվ 980 գրությամբ դիմել է «ԿՈՄԵՐՑԻԱԼ Պարտներս» ՍՊԸ-ին՝ հայտնելով հետևյալը.

«Մեղրիի համայնքապետարանի և «Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 11.03.2017թ. կնքված N ՍՄ-ՄՀ-ՊԸԱՇՁԲ-17/04 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է կատարել նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղում մ/մանկապարտեզի կառուցման» աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար: Համաձայն 18.05.2017թ. կողմերի միջև կնքված Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Համաձայնագրի՝ (այսուհետև՝ Համաձայնագիր) Պայմանագրով

նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է 2017թ. հուլիսի 30-ը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառած վնասները, եթե կապալառուն խախտել է նույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը), որը կողմերի միջ կնքված Համաձայնագրով սահմանվել է 30.07.2017թ.:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 469-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոգրյալով պայմանավորված՝ Մեղրիի համայնքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Կապալառուի հետ կնքված Պայմանագրից՝ համարելով այն լուծված:

Պայմանագրի 6.3 կետի համաձայն՝ նույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ նույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով:

Առաջարկվում է Ձեզ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, որը նաև օրենսդրական պահանջի համաձայն հրապարակվել է www.gnumner.am կայքում, ստանալու օրվա դրությամբ վճարել Պայմանագրի 6.3 կետով հաշվարկված տուգանքը՝ 78.750 (յոթանասունութ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որը հարկավոր է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900305081276 հաշվեհամարին:»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսելու հետաձգման պատճառը կապված է եղել ՀՀ կառավարության կողմից հողի նպատակային նշանակությունը փոփոխելու դրական եզրակացությունը ուշանալու հետևանքով:

Ընկերության ներկայացուցիչը ընդունեց այն փաստը, որ Պայմանագրի շրջանակներում կնքված համաձայնագրով աշխատանքները կատարելու սկզբնաժամկետը և վերջնաժամկետը երկարաձգվել է, սակայն Ընկերության կողմից աշխատանքները չեն վերսկսվել և չեն կատարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ.

- Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման սկիզբնաժամկետը սահմանվել է 11.03.2017թ., իսկ վերջնաժամկետը՝ 31.05.2017թ.:
- Պայմանագրի շրջանակներում 18.05.2017թ. կնքված համաձայնագրով աշխատանքների կատարման սկիզբնաժամկետը սահմանվել է 18.05.2017թ., իսկ վերջնաժամկետը՝ 30.07.2017թ.:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք չտրամադրելով և Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը 30 օրացուցային օրից ավելի երկարաձգելով, խախտել Պայմանագրի համապատասխանաբար՝ 3.2.3 և 8.7 կետերով սահմանված պահանջները:

Խորհուրդը գտնում է նաև, որ «Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում չկատարելով, խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևէ խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.02.2017թ. «Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**